

Ընդհանուր բաժին  
№ 0105  
11 JAN 2022  
Կից  Նշում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ

« 10 » հունվար 2022թ. No 68 - Ա

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ «ԲԱԼԿԱՆՖԱՐՄԱ-ՌԱԶԳՐԱԴ ԱԴ, 68 ԱՊՐԻԼՍԿՈ  
ՎԱՍՏԱՆԻԵ ԲՈՒԼՎԱՐ, 7200 ՌԱԶԳՐԱԴ» ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ (ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ «ՍՓԵՅ  
ՄԵԴԻՔԱԼ ՍՊԸ, ԼԻՆԹՈՆ 7-12 ՏՈՒՆ, ՏԱՎԻՍՏՈԿ ՀՐԱՊԱՐԱԿ ՎՍԻՀԳԼԹ,  
ԼՈՆԴՈՆ, ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ») «ՍԼԻԴԵՐՈՆ,  
ՄԵԹԻԼՊՐԵԴՆԻԶՈԼՈՆ ԴԵՂԱՀԱՏԵՐ 16ՄԳ; (20/2X10/) ԲԼԻՍՏԵՐՈՒՄ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի 2-րդ կետը, «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի փորձաքննության 28.12.2021 թվականի N 0103129121 բացասական եզրակացությունը՝ Բուլղարիայի «Բալկանֆարմա-Ռազգրադ ԱԴ, 68 Ապրիլսկո Վաստանիե բուլվար, 7200 Ռազգրադ» դեղագործական ընկերության արտադրության (դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ «Սփեյ Մեդիքալ ՍՊԸ, Լինթոն 7-12 տուն, Տավիստոկ հրապարակ ՎՍԻՀԳԼԹ, Լոնդոն, Միացյալ Թագավորություն») «Սլիդերոն, մեթիլպրեդնիզոլոն դեղահատեր 16մգ; (20/2x10/) բլիստերում» դեղի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական թիվ 20393 առ 28.12.2021թ. բացասական եզրակացությունը, առ այն, որ որակի փորձաքննության արդյունքները չի համապատասխանում Սլիդերոն-ի «Լուծելիություն» կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Տեսե՛ք. 11.01.2022 Ս. Ք. Բ.

1. Մերժել Բուլղարիայի «Բալկանֆարմա-Ռազգրադ ԱԴ, 68 Ապրիլսկո Վաստանիե բուլվար, 7200 Ռազգրադ» դեղագործական ընկերության արտադրության (դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ «Սփեյ Մեդիքալ ՍՊԸ, Լինթոն 7-12 տուն, Տավիստոկ հրապարակ ՎՍ1<9ԼԹ, Լոնդոն, Միացյալ Թագավորություն») «Սլիդերոն, մեթիլպրեդնիզոլոն դեղահատեր 16մգ; (20/2x10/) բլիստերում» դեղի գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝

1) սույն հրամանը 2-օրյա աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով՝ առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

10.01.2022

X 

ԱՆԱՅԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157